ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/0770/02/25 քաղաք Երևան
10 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Նաիրա Ավետիսյանս, ծանոթանալով «ՄԵԴ ՔԵՓԻԹԼ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ՄԵԴ ՔԵՓԻԹԼ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել ընդդեմ պատասխանող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատասխանող)՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ «ՎԲԿ ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2025թ. կազմված թիվ 4 արձանագրությամբ «Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի 03.02.2025թվականի որոշմամբ վերադարձվել է հայցադիմումը:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին ներկայացրել դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն

ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «ՎԲԿ ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2025թ. կազմված թիվ 4 արձանագրության հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ՄԵԴ ՔԵՓԻԹԼ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ պատասխանող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատասխանող)՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ «ՎԲԿ ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2025թ. կազմված թիվ 4 արձանագրությամբ «Փրայմ Մեդիքալ» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2.«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել «ՎԲԿ ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2025թ. կազմված թիվ 4 արձանագրության հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի մարտի 20-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am